

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգելի հայրենակիցներ

Պատմություն դարձավ նաեւ 2016 թվականը, որի ընթացքում մեզ հաջողվեց իրականացնել խաղաղ ու ստեղծագործ հայրենիք կերտելու մեր ձգտումները, որոշակի ձեռքբերումներ ունենալ կենսագործունեության ամենատարբեր ոլորտներում: Մասնավորապես, հաջողությունները շոշափելի եղան գյուղատնտեսության, ճանապարհաշինության, քաղաքաշինության, կրթության եւ առողջապահության ոլորտներում: Մեզ միահամուռ ուժերով հաջողվեց հաղթահարել նաեւ այնպիսի ծանր փորձություն, ինչպիսին թշնամու կողմից մեզ պարտադրված Ապրիլյան պատերազմն էր Արցախում: Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների վճռականության, Հայոց բանակի արիության եւ համայն հայության համախմբման շնորհիվ հաջողվեց արժանի հակահարված տալ թշնամուն եւ նրան պարտադրել հերթական խաղաղությունը: Ապրիլյան հերոսամարտերում սխրագործություններով աչքի ընկան նաեւ Գեղարքունիքի մարզից զորակոչված բազմաթիվ զինծառայողներ: Ցավոք, շատ դեպքերում մեր հերոս տղաները հայրենիքը փրկեցին իրենց կյանքի եւ արյան գնով: Ապրիլյան հերոսամարտերը եւս մեկ անգամ ապացուցեցին, թե որքան ամուր է մեր ժողովուրդը համախմբված հայրենի պետականության, Հայաստանի եւ Արցախի անվտանգության ապահովման, ազգային միասնության գաղափարի շուրջ: Այդ համախմբումը դրսևորվում է նաեւ հայրենաշինության մեջ, կառավարության կողմից ձեռնարկվող բարեփոխումներում, որոնց հեռահար նպատակը մեր երկրի ծաղկումն ու հզորացումն է, բարեկեցիկ ու ապահով Հայաստանի կերտումը: Անշուշտ, եկող տարում մեզ սպասում են նոր կարեւոր ձեռնարկներ, հաստատուն քայլեր եւ կենսական կարեւոր նշանակության ծրագրեր ամենատարբեր ուղղություններում, որոնց իրականացումը մեզնից յուրաքանչյուրից պահանջելու է առանձնակի նվիրում ու ջանքեր: Թող 2017 թվականը բոլոր հայ ընտանիքների համար լինի խաղաղության, երջանկության ու առատության տարի՝ լեցուն հոգու բերկրանքով, ամենաբարի նպատակների իրականացմամբ, նորանոր ծնունդներով, ձեռքբերումներով ու հաջողություններով: Ծնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ:

Ջերմ բարեմաղթանքներով՝

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ

Ռաֆիկ Գրիգորյան

